

Հաստատված է

*Հայաստանի Քաղաքացիական հասարակության
կազմակերպությունների հակակոռուպցիոն
կոալիցիայի կառավարման խորհրդի կողմից*

30 հունիս, 2016թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՌՈՏԱՑԻՈՆ ԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կարգը կազմվել է Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի (այսուհետ՝ Կոալիցիա) կանոնակարգի 4.8 կետի է) ենթակետի հիման վրա (այսուհետ՝ Կանոնակարգ), որով կարգավորվում է Կոալիցիայի Կառավարման խորհրդի նախագահի ընտրության ռոտացիոն և կառավարման խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը:

2. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՌՈՏԱՑԻՈՆ ԿԱՐԳԸ

- 2.1. Կոալիցիայի Կառավարման խորհրդի նիստերը նախագահում են Կառավարման խորհրդի անդամները՝ ռոտացիոն սկզբունքով՝ Կառավարման Խորհրդի նախագահ ընտրվելու միջոցով՝ 6 ամիս ժամկետով:
- 2.2. Կառավարման խորհրդի նույն անդամը չի կարող ավելի, քան մեկ անգամ անընդմեջ ընտրվել, որպես Կառավարմանը խորհրդի նախագահ:

3. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1. Կառավարման Խորհրդի նախագահը նախագահում Կոալիցիայի խորհրդի նիստերը:
- 3.2. Կառավարման Խորհրդի նախագահը Կառավարման խորհրդի նիստի ընթացքում պարտավոր է քվեարկության դնել Կոալիցիայի գործունեության վերաբերյալ Կառավարման խորհրդի անդամների կողմից կատարված յուրաքանչյուր առաջարկ:
- 3.3. Կառավարման խորհրդի նիստերը արձանագրում է Կոալիցիայի քարտուղարությունը, իսկ նիստերի արձանագրությունը ստորագրում է Խորհրդի նախագահը:
- 3.4. Կառավարման խորհրդի նիստերի բոլոր արձանագրությունները Կոալիցիայի քարտուղարությունը չորս աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Կառավարման խորհրդի անդամներին, որից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե անդամների կողմից առարկություններ կամ լրացումներ չեն լինում, ստորագրվում է կառավարման խորհրդի նախագահի կողմից:
- 3.5. Կառավարման Խորհրդի նախագահը իրականացնում է Կոալիցիայի Կանոնակարգով Կառավարման խորհրդի նախագահի համար նախատեսված այլ լիազորություններ:

4. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Կառավարման խորհրդի նախագահի լիազորությունները դադարում են հետևյալ դեպքերում.

4.1.1. Կառավարման խորհրդի նիստին չմասնակցելու դեպքում՝ առանց հարգելի պատճառի:

4.1.2. Կառավարման խորհրդին գրավոր հրաժարականի ներկայացման դեպքում:

4.1.3. Կառավարման խորհրդի որոշմամբ:

4.2. Կառավարման խորհրդի նիստին Կառավարման խորհրդի նախագահի չմասնակցելու և Կառավարման խորհրդին գրավոր հրաժարականի ներկայացման դեպքերում, մինչև Կառավարման խորհրդի նոր նախագահի ընտրվելը, Կառավարման խորհրդի նիստը նախագահում և նիստի արձանագրությունը ստորագրում է Կոալիցիայի քարտուղարության համակարգողը:

5. ԵԶՐԱՓՈԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն կարգի և Կանոնակարգի միջև հակասություններ առաջանալու դեպքում, գործում են Կանոնակարգով նախատեսված դրույթները: